Հետեւեալ նամակս՝ որ ինչպէս կ՚ծա-
նուցանէ Ռուսչուք քաղաքին մէջ Ս. Էջ.
Կաթուղիկոսի անուան տօնախմբութեան
օրը յատուկ հանդէս յօրինելով՝ ՚ի պա-
տիւ Նորին Վեհափառութեան տեղւոյն
փոխ-Առաջնորդ արժանապատիւ Յո-
վակիմ Վարդապետն վայելուչ սեղան
մի պատրաստեր է Առաջնորդարանը, ուր
քաղաքին թէ՛ ՚ի հոգեւորականաց եւ թէ յաշ-
խարհականաց արժանաւոր անձինք հրա-
ւիրուած են. յորում եւ մի ճառ կար-
դալով, օրինակը ուղարկել են մեզ հը-
րատարակելու խնդրանօք։

Արժանապատիւ Հարք
Գործունեայ աշխատաւորք Արարատ
պատուական եւ ցանկալի ամսագրոյն

Անցեալ Սեպտեմբերի 28ին Մեծի
Զօրավարին սրբոյն Գէորգայ ցանկալի
տօնն կատարելով մեր Ս. Եկեղեցին,
ամենեցուն ուշը դարձրեց ՚ի վերայ նո-
րա Անուանակից Վեհափառ Կաթուղի-
կոսի ամենայն Հայոց Տեառն եւ Տեառն
Գէորգայ, որոյ տօնախմբութեանը ա-
մենքն էլ ըղձակաթ սպասումէին. Առա-
ւօտի եւ այն օրը արժանանալով այդ ցան-
կալի ժամին, ամենքն էլ իւրեանց կողմից
սկսեցին ուրախութիւններն ՚ի յայտ ա-
ծել, նա՛ մանաւանդ տեղւոյս Վիճա-
կաւոր Առաջնորդին Փոխանորդ Աս-
տուածաշնորհ Յովակիմ վարդապետն,
որ այդ ուրախութիւնիցը արժանավայել
սեղան կազմելով մեծ հանդիսիւ կատա-
րել տուաւ այս տօնը, որ համարեա մեր
քաղաքի մէջ առաջին անգամն է առնում.
Այս հանդիսիս ներկայ գտնուեցին քա-
ղաքիս մեծամեծքն եւ յեկեղեցականաց
եւ յաշխարհականաց։

Անորոյ զգածեալ եւ շարժեալ այս
խնդութեան տեսարանէն եւ ես նուիրե-
ցի իմ եռանդուն զգացողութեանց բերկ-
րութիւնը Նորին Աստուածազան Վե-
հափառութեանն, զոր եւ ահա առաքեմ
գիտութեանդ մեծաւորացդ Ս. Միա-
բանութիւնդ եւ խնդրեմ ամենախոնար-
հաբար փոքր ինչ տեղի տալ տպագրու-
թեան նորին Ս. Էջմիածնեան պատուա-
կան Արարատ ամսագրոյ մէջ, ՚ի խրա-
խուսութիւն իմ եւ այլոց յառաջայն։

Խ. Ծ., Հայ Համբարձումեան Խաչատրեանց.

ԲԱՆ

Բացախօսեալ ՚ի դէմ. Փոխանորդի
Վիճակաւոր Առաջնորդի Գարաբաղու
գերապատիւ Տեառն Յովակիմայ Աս-
տուածաշնորհ վարդապետին, եւ այլոց
բազմաց հանդիսականաց, յաւուր տօնի
Անուանակցի Վեհափառ Հայրապետին
մերոյ Տեառն եւ Տեառն Գէորգայ Աս-
տուածընտիր Կաթուղիկոսին ամենայն
Հայոց. Սրբոյն Գէորգայ մեծի Զօրա-
վարին, ՚ի տան Վիճակային Առաջնոր-
դարանին Հայոց Գարաբաղու ՚ի Ռու-
չուք քաղաքի, ՚ի 28ն Սեպտեմբ. 1868 ամի.

Ով մեծի հանդիսի աւուրս եւ բերկ-
րալից խնդութեան համայնից Յաբե-
թեան գրոհի, զի՞նչ այս տեսարան ցնծու-